

իր մտադրութիւնը , և վսեմախոհ հոգաբարձութիւնը առանց խտրութեան իր ամեն հպատակացը յաջողութեանը , երջանկութեանը ու կրթութեանն համար : Եւ այսպէս իր կառավարութեանը բարեսիրութեանն արժանի կ'ըլլաք , որ այնչափ ճշգրտութեամբ անոր վսեմ մտածութիւններն 'ի գործ կը դնէ :

Խօսքս լմնեցունելէն առաջ ինձի հաճոյական պարտք մը կը սեպեմ օգոստոսի առ Սուրբանին պետութեանը կողմանէ շնորհակալ ըլլալ ձեր մեծաւորաց և վարժապետաց յարատե ու լուսաւոր ջանիցը , որոնցմով զձեզ հոգացին ձեր ուսման ընթացիցը մէջ : Ուրեմն անոնք որ Գաղղիայէն իրենց հայրենիքը պիտի դառնան , բարեպաշտութեամբ այս ազնիւ անձանց յիշատակը պահեն մտքերնուն մէջ , և լաւ գիտնան որ քաղցր վարձատրութիւն մը եթէ կայ այն անձին՝ որ պատանեկան թարմ միտք մը կրթեց գիտութեանց մէջ , պատուոյ և առաքինութեանց ճամբուն մէջ , այն ապահովութիւնն է միայն որ գիտէ թէ իր աշակերտը միշտ իրեն երախտապարտ պիտի մնայ :

Չմոռնանք նաև վարժարանիս Բարերարը ու անունն օրհնելու , որ այնչափ ազնուական կերպով գործածեց իր ճոխութիւնը նմանեացն օգնութեան հասնելու համար : Երանի թէ ուրիշներն ալ իրեն օրինակին հետեւին : Եթէ ամեն մեծատուն մարդիկ իրենց ճոխութեանը մէկ պզտի մասը իր երկուց սեռից աղքատաց զաւակաց կրթութեանը նուիրէին , հիմա երջանիկ կ'ըլլայինք ամեն երկիրներու մէջ տեսնելով հասարակաց կրթութեան անթիւ դպրոցներ ու վարժարաններ :

վարժարանիս աւարտավարժ աշակերտքն են .

Պ . Վիշէն Խորասանձեան .

Պ . Միքայէլ Հէգիմեան .

Պ . Գէորգ Վարայեան .

Պ . Ոթոն Վալճեան .

Պ . Փառնակ Թովմասեան .

Պ . Յովհաննէս Նիկողիմոսեան .

Պ . Վիշէն Մուրատեան .

Պ . Տիգրան Սոփեալեան .

Հ Ո Ղ Մ Ն

Ուստի 'նդ օդոց նըսեմաստուեր ասպարէզ
Մըռնչելով արշաւասոյր հասանես ,
Հողմն՝ ընդ ոլորոս երկրի տըւեալ ասպատակ ,
Քանդել զհանուրս ըսպառնալով հիմնատակ . . .
Մութ են այերք , ամպք ձրձոտեալ ցիր եւ ցան
Աստեղք տժգոյն , կոհակք ըմբոստք ի տատան .
Ուստի , ընդէր : — Ի կապանաց միտք իմ՝ զերծ
Քեւ արշաւեն ի թըլփայորդ ծոց այերց .

Եւ ի ջընջել ըզբնաւս անհետ խաւարին՝
Ազատօրէն արդ ընդ տարերց բարբառին :
Յերկնամբերձիկ գագաթանէն Ուրալայ
Ի սառնապատ վախիցն ելեալ իբր հըսկայ ,
Շուրջ փոթորիկս եւ ձիւն ի դուրս ժայթքելով ,
Լեռնակուտակ պաղեալ սառոյցս ի հոլով
Սեւափետուր ոգիդ մըրըկաց՝ իջանես
Ընդ լայնատարըր սահարկել դաշտօրէս :
Ո՛հ , զի ախորժ , զի ահարկու , զի վըսեմ ,
Մինչդեռ հորդան տըւեալ յանտառըս նըսեմ՝
Ահեղագոչ թափով դղըրդես ըզսարոյս .
Բողոք յերկիր կըբին մայրիք մըրըկայոյզ .
Վազը եւ յովազ փայլակնացայտ ակնարկեօք
Ընդոստուցեալք յորջոցն՝ ոռնան սիրտ ի հոգ .
Բոցաճարակ արկեալ շանթից շուրջ հրդեհ
Ճարճատելով կիզուն մայրիք դեհ ընդ դեհ .
Իբր ահարկու հրեղէն յորդեալ Ովկէան
Ծածկէ զլերինս բոց ալեծուփ ի ծածան :
Դու զմեծատան որ զցայգն ի բուն ի գինիս
Եւ ի կաքաւըս յօրանայ լըրբենիս ,
Լըսես շըռինդն եւ զհառաչանս աղքատին՝
Որ ցրտաբեկ զոփայ որդւովք ի խըղին .
Դու քանի՞օն իջեալ թափով ալեսաստ
Վարես զի ծով ապաւինեալ նըկուն լաստ ,
Ոյր կայմք բեկեալ եւ առագաստքն ի ծըւէն
Թշուառ անյոյս ալեաց յալիս աստանդեն :
Ո՛հ , տար տար հողմ՝ զաղիողորմ հառաչանս ,
Տար անդր յերկինս ըզնաւազին ջերմ մաղթանս .
Քանի անձկաւ նըմա սպասէ հարան արդեօք
Ի գուճս անկեալ առ Տիրամայրն որդեկօք .
Եւ ուղերձեալ կողկողադին զաչս ի վեր
Լայ աղօթէ խանդիւ՝ վստահ լոկ ի Սէր :
Բայց դու , անգութ , յարուցանես եւս քան զեւս
Ըզվայրենի ալեաց ըզկոյտ փրփրադէզ .
Լերինք շարժունք մըրնչաձայն գան կանդնին
Եւ զիրերաց անկեալ թիկամք փեռեկին .
Մինչեւ ի վիհս անդ ուր առեալ օթւան ,
Զբօսնու վիշապն անդընդեհպետ լեւիաթան :

Այսպէս դղրդեալ քո հիմն 'ի վեր ըզՊոնտոս
Գրոհ տաս ի դաշտ՝ զոր ոռոգէ Սկամանդրոս .
Թեւքդ ահարկուք եւ անպատկառք ի դարուց
Ջաճին քաջաց ցըրուեն շիրմին ի յալուց ,
Եւ ի դերբկաց ուր էր երբեմն Իլիոն
Յարուցանես մահագուշակ ինչ գեղօն ,
Ճախր ընդ պարիսպս առեալ մերոյս Բիւզանդեայ
Ուր փոխանակ խաչին՝ մահիկն արդ շողայ ,
Ողբաձայնես ընդ մութ նոճեօք տըխրակոծ
Իբր եղերերդ անդ տարածամ անկելոց :
Ջեգեան անդունդըս պըղտորես , ուր էաս
Յեց ի ջախջախ կայմ՝ բողբէր դիցն ի կայս .
Եւ այդեւէտ կղզեաց զափամք տապալես
Ջըսպառնալից կոհակըս քո փրփրադէզ :

Յարեւակէզ սին անապատս Ափրիկոյ

Երկնակուտակ կանգնես պալատս աւաղոյ ,
Որ պըտոյտքեալ գալարածեւ յանհուն դաշտ՝
Համակ կըլին երբեմն ըզպետս եւ ըզվաշտ .
Բայց կործանող ի բռնութեանդ՝ ովասիս
Հովանացեալ յարմաւս , հալուէս , յուռենիս՝
Ակկիոֆնի իբր ի յուզեալ լիճս անդ բոյն
Յանուշաւէտ խունկս ըզմայլեալ՝ կայ ի քուն :
Ո՛հ , երթ սլացիր , ո՛վ այս՝ ոյր ծալք հանդերձիդ
Սեաւ սեաւ ծրփան յօդոց խորանս ամպախիտ ,
Երթ ժողովեա՛ զհոգ եւ զհառաչըս մարդկան ,
Ամբարձ հասո՛ ի դահոյս անդր աստուածեան .
Տես ուր խորանս հարեալ բանակք զինապատ
Ի խողխողել զիրեարս կազմին ի ճակատ .
Եւ տըքնելոյ պահակին ձայն կերկերեալ
Ազդ ընկերին առնէ անդուլ պատրաստ կալ :
Կամ զերերեալ տես ի յանդունդս անդ ըզլաստ ,
Որ ումբակոծ կիզեալ՝ չըջի անդ եւ աստ .
Եւ զանոլորտ ծովուն ալիս կապտաթոյր
Արիւնազանդ թաւալեալ շուրջ ի փրփուր :
Տես ըգբերդողն եւ զգօնամիտ իմաստուն
Որ զցայգն ի բուն եւ ըզցերեկ գործէն գուն
Խորազընին ի համագոյս ընդհանուր
Խնդրել ըզհետըս ճըշմարտին լուսասփիւռ

Տես ըզթշուառս որ ի հիւղի, որ ի գահ՝
Հիւծեալ ի հոգ վաղորդայնին ահ ընդ ահ .
Չախտացելոյն լուր մահագոյթ հեկեկանս
Ոյր աղմըկին միտք հայելով ի դամբանս .
Ըզպատանւոյն քաղեա՛ զհառաչ եւ զկուսին
Որ առ կընձնեաւ անդ իրերաց մընային ,
Եւ ի սահել քո ընդ տերեւս ի տառան
Ըզտարփալոյն կարծէին քաղցր ոտնաձայն :
Չայսոցիկ , հողմ, ա՛ռ դու զքնաւից սօսաւին ,
Հիւսեա տըխուր դաշնակութիւն ինչ նովին .
Եւ թէ երկրիս պահապան վեհ զըւարթուն՝
Հսկէ ըզմեօք յօդոց կամար միշտ անքուն ,
Ասա՛ նըմին , զի շուրջ յածեալ ընդ երկիր
Ըզմահացուաց մինչ զըզբաղումն յուզէիր ,
Լըւար ինչ ոչ , գըտեր դու անդ եւ ոչ ինչ ,
Բայց արտասուս , բայց հառաչանս , հոգ եւ ճիչ :

ԹՈՄԱՍ ԹԷՐԶԵԱՆ

Ա.ՂԵԱՆՅ ԳԵՏՆԱՓՈՐ ԱՆՑՔԸ

(Տես երես 328 :)

Գիտութիւնը անգործ կեցած չէր այս
մեծ խնդրոյն դիմաց : Իրեն ձեռնտուութիւնը աւելի կարևոր էր քան զգրամականն՝ այս գործը ՚ի գլուխ տանելու .
և կարելի ալ է որ իրմէ մասնաւանդ կը
կախուէր ամենայն յաջողութիւն :

Երկրաբանութիւնը քան զամենքը
յառաջ անցաւ քննելու թէ ինչ պիտի
ըլլայ դռնելին շրջակայքը , ինչ տե-
սակ նիւթեր պիտի գտնուին ճամբուն
վրայ , և ինչ անոնց բնութիւնը : — Այս
խնդիրը 1845 էն ՚ի վեր սկսեր էր բազ-
մաց հետաքրքրութիւնը շարժել , և ար-
դէն զանազան նշանաւոր գործքեր Ալ-
պեանց ներքին կազմութեանը և անոր
հանքաբանութեանը վրայօք հրատա-
րակուեր էին ՚ի Դուրին , ՚ի Շամպէռի ,
՚ի Ճենովա , ՚ի Բարիզ , և այլուր : Այդ

լերանց արտաքին ձևը դիտելով և ի-
րենց դրսէն տեսնուած խաւերը՝ զննե-
լով , և թէ այս խաւերը ինչ երկրաբա-
նական բնութիւն , դիրք և թանձրու-
թիւն ունին , կրցան այնպիսի զարմա-
նալի ճշդութեամբ գուշակել այդ ամե-
նաստուար լերանց խորը ծածկուած
նիւթերը , որ մինչև ցայսօր փորուած
մասէն ելած նիւթերը բաղդատելով
դիտնոց ենթադրութեանը հետ , նշա-
նաւոր տարբերութիւն մը դեռ չերե-
ցաւ : Ալպեանց գետնափոր անցքին
ժայռերը իրեք խումբի կը պատկանին ,
որ ըստ երկրաբանից անուանակոչու-
թեան են՝ ածխաքարուտ վերին , ած-
խաքարուտ ներքին և ձուաքարուտներ
քին¹ : Այս խումբերը սեռականաբար
կը կոչուին միգային , դալգային , կրա-
յին , և քուարցային , ըստ որում իրենց
մէջ տիրող ըլլայ կամ միգան կամ դալ-

¹ Այն է՝ հողերուն այլ և այլ կարգերը որ վը-
րայէ վրայ շարուած կ'երևան գետնին տակը :

² Գլ. Anthracite supérieur, Anthracite infé-
rieur, Oolithe inférieure.